



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 նոյեմբերի 2006թ.

N 570

ք.Ստեփանակերտ

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անասնաբուժության
բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների արտադրության
լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևերը հաստատելու մասին**

«Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների արտադրության լիցենզավորման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

բ) անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների արտադրության լիցենզիաների ձևերը՝ համաձայն թ.թ 2 և 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԵՆՍԱԿԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների (այսուհետ՝ կենսապատրաստուկներ) արտադրության լիցենզավորման գործընթացը՝ «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) դրույթներին համապատասխան:

2. Կենսապատրաստուկների արտադրության համար լիցենզիաները տրվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից (այսուհետ՝ լիցենզավորող մարմին)՝ բարդ ընթացակարգով, անժամկետ:

3. Կենսապատրաստուկների արտադրության լիցենզիա տալու համար զանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

4. Բարդ ընթացակարգով լիցենզիան տրվում է օրենքով և սույն կարգով նախատեսված փաստաթղթերը լիցենզավորող մարմին ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

5. Կենսապատրաստուկների արտադրությունն իրականացվում է միայն լիցենզիայում նշված վայրում:

II. ԿԵՆՍԱԿԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

6. Կենսապատրաստուկների արտադրության լիցենզավորման համար հայտատուն ներկայացնում է՝

ա) լիցենզիա ստանալու մասին հայտը՝ համաձայն NN 1 և 2 ձևերի, նշելով՝ իրավաբանական անձը՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

անհատ ձեռնարկատերը՝ անունը, հայրանունը, ազգանունը, բնակության և մասնագիտական գործունեության իրականացման վայրը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել.

բ) իրավաբանական անձը՝ կազմակերպության կանոնադրության և պետական ռեգիստրի վկայականի պատճենները, իսկ անհատ ձեռնարկատերը՝ պետական գրանցման վկայականի պատճենը.

գ) լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը.

դ) համապատասխան գործունեություն իրականացնելու ընթացքում կիրառվող չափման միջոցների ստուգաչափման մասին վկայականները՝ համաձայն «Չափումների միասնականության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթի.

ե) կենսապատրաստուկների արտադրության կազմակերպման համար տարածքի նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքի պետական գրանցման պատճենը.

զ) լիցենզավորված մարմնի փորձաքննության մասին եզրակացություն ասպրանքների, առարկաների, սարքավորումների, լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերի մասին:

III. ԿԵՆՍԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ

7. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

8. Հայտի մերժման մասին լիցենզավորող մարմնի որոշումը հայտատուին տրվում է որոշման ընդունումից հետո 3 օրվա ընթացքում:

9. Լիցենզավորող մարմնի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

10. Լիցենզիայի վերաձևակերպմանը կամ գործողության կասեցմանը կամ դադարեցմանը ներկայացվող պահանջները սահմանված են «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

IV. ԿԵՆՍԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՎԵՐԱՀՍՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

11. Լիցենզիայի պայմանների և պահանջների կատարումն օրենքով սահմանված կարգով վերսկսվում է լիցենզավորող մարմնի կողմից:

12. Լիցենզիա ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություններ ու տեղեկություններ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

13. Լիցենզիա տալու կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով լիազոր մարմինը ստժծում է լիցենզավորող հանձնաժողով (այսուհետ՝ լիցենզավորող հանձնաժողով), որի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը:

14. Սույն կարգի II բաժնում նշված փաստաթղթերը լիցենզավորող մարմնում մուտքագրվելուց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում նշանակվում է քննարկում, որի մասին առնվազն 7 օր առաջ լիցենզավորող անձը պատշաճ ձևով տեղեկացվում է քննարկման վայրի (հասցեի), ամսաթվի և ժամի մասին: Հանձնաժողովն իր հերթական նիստիտևի, ժամանակի և քննարկվող հարցերի մասին տեղեկատվություն է հրապարակում մամուլում նիստի օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ:

15. Լիցենզավորող հանձնաժողովը հայտը քննարկում է սույն կարգի 14-րդ կետով նախատեսված օրը և ժամին: Հարցերի քննարկմանը հրավիրված անձանց չմասնակցելը հիմք չի հանդիսանում հարցերը չքննարկելու կամ այն մերժելու համար, եթե հրավիրված անձը չի խնդրել քննարկումն անցկացնել այլ ժամկետներում: Հրավիրված անձի՝ սույն խնդրանքը կարող է բավարարվել, եթե նա քննարկմանը չի կարող մասնակցել հարգելի

պատճառով և, եթե քննարկումը հետաձգելիս չեն խախտվի օրենքով նախատեսված քննարկման ժամկետները:

16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջներին լիցենզիա ստանալու մասին հայտի բավարարման դեպքում լիցենզավորող մարմինն ընդունում է անասնաբուժական դեպքերի արտադրություն իրականացնող անձանց մասնագիտական որակավորման ստուգման մասին որոշում, որի պատճենը 3 օրվա ընթացքում պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, ուղարկվում է լիցենզավորվող անձին կամ առձեռն հանձնվում է նրան կամ նրա ներկայացուցչին: Լիցենզավորող մարմինը լիցենզիա ստանալու մասին հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության դեպքում 10-օրյա ժամկետում տեղեկացնում է լիցենզավորվող անձին: Լիցենզիա ստանալու մասին հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների առկայության դեպքում լիցենզավորող մարմինը հայտը կարող է բավարարել վերապահումով, որ լիցենզիան հայտատուին կտրվի դրանց վերացման դեպքում: Լիցենզավորող մարմնի ծանուցումից հետո, 10 օրվա ընթացքում, նշված թերությունները վերացվելու և ուղղված փաստաթղթերը լիցենզավորող մարմին ներկայացվելու դեպքում լիցենզավորող մարմինն ընդունում է որոշում անասնաբուժական դեպքերի արտադրություն իրականացնող անձանց մասնագիտական որակավորման ստուգման մասին:

17. Անասնաբուժական դեպքերի արտադրություն իրականացնող անձանց մասնագիտական որակավորման ստուգումից պահանջվում, եթե նախկինում նրանք անցել են որակավորման ստուգում և ստացել են սույն կարգի 25-րդ կետով նախատեսված մասնագիտական որակավորման վկայական:

VI. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Անասնաբուժական դեպքերի արտադրություն իրականացնող անձանց (այսուհետ՝ որակավորվող անձինք) մասնագիտական որակավորման ստուգումը կազմակերպում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի կողմից ստեղծված որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ որակավորող հանձնաժողով):

19. Սույն կարգի II բաժնում նշված փաստաթղթերը լիցենզավորող մարմին ներկայացվելուց ոչուշ, քան 15 օրվա ընթացքում որակավորման հանձնաժողովը իրականացնում է որակավորվող անձանց մասնագիտական գիտելիքների ստուգում:

20. Մասնագիտական որակավորման ստուգման հարցաշարերում ներառվող հարցերի

ցանկը՝ ընդհանուր հարցաշարը, հաստատվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով: Մասնագիտական որակավորման ստուգման հարցաշարը ենթակա է պարտադիր հրապարակման՝ ստուգման օրվանից ոչուշ, քան 6 ամիս առաջ:

Քննական հարցաշարը կազմվում է քննության օրը՝ համակարգչային ծրագրի միջոցով, պատահական ընտրության սկզբունքով, որակավորվող անձի և հանձնաժողովի անդամների ներկայությամբ:

Յուրաքանչյուր որակավորվող անձի համար կազմվում է առանձին հարցաշար:

21. Անասնաբուժական դեպքերի արտադրության մասնագիտական որակավորման ստուգման հարցաշարը ներառում է 20 հարց՝ ըստ հետևյալ ոլորտների և հարցերի բաշխվածության՝ լիցենզավորման մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրություն՝ մեկ հարց,
անասնաբուժության մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրություն՝ մեկ հարց,

մանրէակենսաբանություն՝ 3 հարց,

վիրուսաբանություն՝ 3 հարց,

սնկաբանություն՝ 3 հարց,

շճաբանություն՝ 3 հարց,

իմունոլոգիա՝ 3 հարց,
կենսատեխնոլոգիա՝ 3 հարց:

22. Մասնագիտական որակավորման ստուգումն անցկացվում է գրավոր, հայերենով, որի համար հատկացվում է 2 ժամ և արգելվում է օգտվել փաստաթղթերից ու տեխնիկական միջոցներից:

23. Որակավորվող անձը համարվում է անասնաբուժական դեմոնստրացիայի արտադրության մասնագիտական որակավորման ստուգումն անցած, եթե ճիշտ է պատասխանել սույն կարգի 21-րդ կետով նախատեսված ոլորտներին վերաբերող հարցերից առնվազն 16-ին:

24. Որակավորվող անձը պատշաճ ձևով տեսկացվում է մասնագիտական որակավորման ստուգման արդյունքների մասին դրա անցկացումից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում: Որակավորման ստուգման արդյունքները կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

25. Մասնագիտական որակավորման ստուգում անցած անձին տրվում է մասնագիտական որակավորման անժամկետ վկայական, որի ձևը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը:

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար - նախարար**

Ս. Գրիգորյան

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ _____
(անունը, ազգանունը, հայրանունը)
_____ -ին

Հ Ա Յ Տ

ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը _____

Կազմակերպական-իրավական ձևը _____

2. Գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը _____

3. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որին հավակնում է իրավաբանական անձը _____

Հայտին կից ներկայացվող փաստաթղթերն են՝

- ա) կանոնադրության պատճենը,
- բ) պետական ռեգիստրի վկայականի պատճենը,
- գ) տեղեկանք գործունեության իրականացման տարածքների մասին,
- դ) արտադրանքի որակի փորձաքննության մասին եզրակացությունը,
- ե) ստուգաչափման մասին վկայականները,
- զ) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
- է) անասնաբուժական դեղամիջոցն արտադրող անձանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի պատճենները, նրանց բժշկական կամ անասնաբուժական կամ կենսաբանական բարձրագույն կրթության մասին դիպլոմի պատճենը և մանրէակենսաբանական կամ վիրուսաբանական կամ սնկաբանական կամ շճաբանական հետազոտությունների իրականացման կամ կենսատեխնոլոգիայի բնագավառում համապատասխան աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերը:

Ներկայացված տեղեկություններիիսկությունը հաստատում եմ

կազմակերպության տնօրեն _____ (անունը, ազգանունը, հայրանունը) _____ (ստորագրությունը)

_____ 2006թ.

Կ.Տ.

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ _____
(անունը, ազգանունը, հայրանունը)
_____ -ին

Հ Ա Յ Տ

ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը _____

2. Բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը _____

3. Անձնագիրը _____
(սերիան և համարը)
4. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որին հավակնում է անհատ ձեռնարկատերը (ֆիզիկական անձը) _____

Հայտին կից ներկայացվող փաստաթղթերն են՝

- ա) պետական գրանցման վկայականի պատճենը,
- բ) տեղեկանք գործունեության իրականացման տարածքների մասին,
- գ) արտադրանքի որակի փորձաքննության մասին եզրակացությունը,
- դ) ստուգաչափման մասին վկայականները,
- ե) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
- զ) բժշկական կամ անասնաբուժական կամ կենսաբանական բարձրագույն կրթության մասին դիպլոմի պատճենը և մանրէակենսաբանական կամ վիրուսաբանական կամ սնկաբանական կամ շճաբանական հետազոտությունների իրականացման կամ կենսատեխնոլոգիայի բնագավառում համապատասխան աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերը:

Ներկայացված տեղեկություններիիսկությունը հաստատում եմ

անհատ ձեռնարկատեր _____ (անունը, ազգանունը, հայրանունը) _____ (ստորագրությունը)

_____ 2006թ.

Կ.Տ.

ԼՂՀ կառավարության
2006թ. նոյեմբերի 28-ի
քիվ570 որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ _____

Տրված է _____ 200__թ.

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը _____

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ _____
անժամկետ

ԼՂՀ գյուղատնտեսության նախարար _____

(ստորագրությունը)

Կ.Տ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար - նախարար

Ս. Գրիգորյան

ԼՂՀ կառավարության
2006թ. նոյեմբերի 28-ի
թիվ570 որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ _____

Տրված է _____ 200__թ.

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը _____

Անհատ ձեռնարկատիրոջ

Գործունեության իրականացման վայրը _____

Գործողության ժամկետը՝ _____
անժամկետ

ԼՂՀ գյուղատնտեսության նախարար _____
(ստորագրությունը)

Կ.Տ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար - նախարար

Ս. Գրիգորյան